ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-26/18 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան 10.04.2026թ.
Ժամը 12:00

Գնահատող հանձնաժողովի նիստին մասնակցում էին

Լ.Սարգսյան	-հանձնաժողովի նախագահ	Ծրագրի ղեկավար
Ա.Աջամօղլյան	-հանձնաժողովի անդամ	Ծրագրի համակարգող
Դ.Նիկողոսյան	-հանձնաժողովի անդամ	ՇՄՆ ԲԾԻԳ ՊՀ-ի գործերի կառավարման և գնումների բաժն պետ/գործերի կառավարչի պարտականությունները կատարո
Մ.Քիրամիջայն	-հանձնաժողովի անդամ	ՇՄՆ ԲԾԻԳ ՊՀ-ի ծրագրերի իրականացման և մոնիտորինգ բաժնի պետի պարտականությունները կատարող
Մ. Բարդումյան	-հանձնաժողովի անդամ	Ծրագրի մոնիտորինգի մասնագետ

Տեղեկություն ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-26/18 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-26/18 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են 2026 թվականի ապրիլի 8-ին ժամը 14:00 www.armeps.am համակարգի միջոցով:

Կողմ՝	5
Դեմ՝	0

Տեղեկություն ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-26/18 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման մասին

2026թ-ի ապրիլի 10-ին «Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գրասենյակում, որը գտնվում է ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա հասցեում, տեղի ունեցավ ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-26/18 ծածկագրով («Շիրակի մարզում կլիմայի փոփոխության նկատմամբ համայնքների դիմակայունության բարձրացում՝ Արթիկ համայնքում իրականացված պիլոտային ծրագրի լավագույն փորձի կիրառմամբ» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Թիրախային համայնքներում կլիմայի փոփոխության և մարդածին ազդեցությունների նկատմամբ բնական, գյուղատնտեսական և ենթակառուցվածքային համակարգերի հարմարվողականության և կայունության գնահատման ծառայությունների ձեռքբերում) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է 5 անդամից, և հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի 5 անդամները, հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ.Սարգսյանը, իսկ քարտուղարն էր՝ Ա.Հակոբյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-26/18 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտի գնահատման և առաջարկված գնի մասին
2. Ընտրված /և հաջորդաբար տեղեր զբաղեցրած/ մասնակից որոշելու մասին
3. Պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

1 ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-26/18 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Դ.Նիկողոսյանը նիստը հայտարարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկան և այն փաստը, որ գնումը իրականացվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետի ընթացակարգով:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1	Թիրախային համայնքներում կլիմայի փոփոխության և մարդածին ազդեցությունների նկատմամբ բնական, գյուղատնտեսական և ենթակառուցվածքային համակարգերի հարմարվողականության և կայունության գնահատման ծառայություն	7500000

ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-26/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.gnumner.am կայքի armeps համակարգի միջոցով հրավերի սահմանված օրը և ժամին՝ 2026 թվականի ապրիլի 8-ին ժամը 14:00: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ պարզաբանում տեղի չի ունեցել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-26/18 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձը/ինք/ այսուհետ՝ նաև մասնակիցը/ները//.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցեներ	Հեռախոսահամար և էլ հասցե
1	Աութսորս ՍՊԸ	ք.Երևան, Սարմենի 1,2/1 տարածք	033888885, info@osllc.am

Հանձնաժողովը արձանագրեց, որ

- Մասնակից/ներ/ը հայտ/եր/ը կազմել և ներկայացրել են ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-26/18 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/

պահանջներին համապատասխան, սակայն Աութսորս ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերից անհրաժեշտություն է առաջացել շտկման ուղարկել մի քանի փաստաթուղթ: Մասնավորապես՝

- Աշխատանքային ռեսուրսների երկու անդամի մասնագիտական փորձառությունը ապացուցող փաստաթղթերը բացակայում էին:
- Երկու մասնագետների ինքնակենսագրականները անգլերեն լոզվով էր: Առաջարկվեց ուղարկել թարգմանված տարբերակը:
- Նիստը կասեցվեց 1 աշխատանքային օրով, մասնակցին ծանուցվեց անհամապատասխանության մասին: Աութսորս ՍՊԸ-ը շտկեց փաստաթղթերը և ներկայացրեց բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

- Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում

Չափա-բաժնի համար	Մասնակցի/ Участник		Մասնակիցների առաջարկած գները		
	Զբաղեցրած տեղ/	Անվանում	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
	1	Աութսորս ՍՊԸ	6250000	1250000	7500000

Որոշվեց Լ.Սարգսյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Աութսորս ՍՊԸ հայտը գնահատել բավարար, քանի որ համապատասխանում է Հրավերի պահանջներին և ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 5

Դեմ՝ 0

2. ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ/ՆԵՐ/ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց

Որպես ընթացակարգի

- 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտ ՊՈԱԿ-ը:

Կողմ՝ 5

Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա.Հակոբյանը ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Հանձնաժողովի նախագահ՝
Լ.Սարգսյան

Հանձնաժողովի անդամներ՝
Ա.Աջամօղլյան

Դ.Նիկողոսյան

Մ.Քիրամիջյան

Մ.Քարդումյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Հակոբյան